

## ՎԱԽԱՐՈՒ ՀԱՍՏԵ ՌՈՒՍԱՑ ՊԱՏՐԻԱՐքԻՆ

Յ Մայիս, Հինգշարթի օր, Մոսկովյայի մէջ վախճանեցաւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Ն. Ամեն. Պիմէնը, 79 տարեկան հասակին:

Պիմէն Պատրիարք 1971ին բարձրացած էր զահ և յաջորդ տարին այցելութեան եկած էր Ս. Երկիր: Այդ առթիւ այցելած է նաև Սրբոց Յակոբին և Մայրավանքը ուրիշ բարձր գիրքին արժանի ընդունելութիւն մը գտած է օրուան Պատրիարք Եղիշէ Արքապատ:

Կը նկատուի լայնախոն և Քրիստոնէական ազնիւ առաքինութիւններով օժտուած հոգեւորական մը: Ան եղաւ բախտաւոր, անոր համար որ կրցաւ վայելի պատուեները Կորպահելի Կոմանչուով եկեղեցիներու ու կրօնքին ջնորհած հոմեմատական ազատութեան: Աւ աէժմի նախկին կաշկանդումներէն ծերբազատ, կրցաւ շատ մը վակուած ազօթավայրերու գործածութիւնը ապահովիլ իրենց համար սահմանուած սրբազան նպատակին: — Աղօթք և խունկ իր յիշատակին:

Այս տիսուր առթիւ, հետեւեալ հետազիրները փոխանակուած են. —

Երուսաղէմ, 6 Մայիս 1990

Գերշ. Տ. Քիրիլ Արքապատ.

Տանիելով Մենաստան թիւ 22

Արտաքին Գործոց Բաժին Ռուս Եկեղեցւոյ

Խորապէս կ'ողանք մահը Համայն Ռուսիոյ Պատրիարք Պիմէնի: Իր մեկնումը մած կորուստ մըն է Քրիստոնէական Եկեղեցին: Մեր Համանակներու առասպելական դէմքերէն մին էր հանգուցեալը. Ան ափտի յիշուի իր կորովին, իմաստութեան և Քրիստոնէական առաքինութիւններուն համար: Հայ Եղեղեցին կորուցուց մած բարեկամ մը: Յաջորդ Կիրակի մասնաւոր Հոգեհանգստեան պլաշոն պիտի կատարենք իր բարի հոգիին հանգստեան համար:

Կորապէս վշաակից

ԹՄՐԴԱՄ ԱՐԵՎԱԿԱԿԱՆ

Պատրիարք Ս. Երուսաղէմի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՇՄԱՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Մոսկով, 15 Մայիս 1990

Ամեն. Տ. Խորգում Արքապատ. Մանուկեան

Պատրիարք Հայոց

Երուսաղէմ

Հաճեցէք ընդունիլ մեր սրտազին ջնորհակալութիւնը Զեր արտայայտութեան համար, որով վշտակից կը դառնաք Ռուս Օրթոստոք Եկեղեցւոյ: Ան մոռանալի Պիմէն Պատրիարքի բարի յիշատակին համար Զեր մատուցած աղօթքները կը գնահատենք: Խող Տէրը իր երկնաւոր կայքերուն մէջ հանգիստ պարգևէ մեզմէ բաժնուող Հոգուապետին հոգւոյն:

Յարուցեալ Քրիստոսի սիրով

ՔԻՐԻԼ

Արքապատ. Սմօլէնսքի և Քալինինկրատի

Ատենապետ

Եկեղեցւոյ Սրտաքին Գործոց Բաժին

Մոսկովյայի Պատրիարքութեան

\* \* \*

Յունիսի սկիզբը, Ռուս Եկեղեցւոյ Գերագոյն Սինոտը ընտրած է Պիմէն Պատրիարքի յաջորդը, յանձին Տ. Ալէքսէյ Սրբազանի: